ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

«Արարատի» խմբագրութիւնը ցանկանալով ըստ կարողութեան հետաքրքիր դարձնել ամսագիրը և, որքան թերթի ծաւալը ներում է բաւարար նիւթ տալ ընթերցանութեան համար, դիմում է հայ գրագէտներին և ուսուցիչներին խնդրելով նրանց աշխատակցութիւնը։

«Արարատում» բացի կրօնական—բարոյական յօդուածներից, կարևոր տեղ պիտի յատկացուի նաև մանկավարժական, գրական—բանասիրական ու պատմական յօդուածների և ուսումնասիրութիւնների։

Առանձին ուշադրութիւն պիտի դարձուի ոչ միայն մեր և օտար ազգերի եկեղեցական կեանքին, այլև հայ կեանքին ընդհանրապէս։

Ստացած գրքերի մասին մատենախօսութիւն գրել կը տրուի ձեռնահաս անձերի։

Ցանկալի է, որ ուղարկուած յօդուածները երկար չարունակելի չլինին։

Յօդուածների համար կը տրուի վարձատրութիւն կամ դրամով, կամ յօդուածների արտատպութեամբ «Արարատի» դիրքով։ Վարձատրութեան չափը կամ տրուած օրինակների թիւը կորոշէ խմբագրութիւնը։ Եթէ յօդուածագրի կողմից որևէ ցանկութիւն չէ յայտնուած վարձատրութեան մասին, յօդուածը չի վարձատրուի։ Զեն վարձատրուում նաև վեց երեսից պակաս պատահական յօդուածներ, ինչպէս և թղթակցութիւնները ու պատասխանները։

Խմբագրութիւնն ազատ է համարում իրեն՝ յօդուածները կրճատելու, եթէ յօդուածագիրն առաջուց պայման չէ գրել անփոփոխ տպագրելու։

Թարգմանութիւններ ուղարկելիս պէտք է յիշատակել բնագիրը (հեղինակ և լեզու) և, եթէ կարելի է, ուղարկել նաև բնագիրը, որ յետ կը դարձուի ուղարկողին։

Զտպուած փոքր նիւթերը չեն վերադարձուում, իսկ մեծ յօդուածները վերադարձուում են յօդուածագիրների հաշուով։ Զտպուելիք նիւթերի մասին կը յայտնուի «Արարատում»։